

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՑ

Գ. ՇՐՋԱՆ

Թիի 56

1899 ՄԱՅԻՍ 1

Ամեն շաբաթ համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը համապատասխան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 լիւրէի տեղ 105 լիւրէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրութիւններ. — Օգտակար ծառ.

Մեհրէն Ուլ-Բեկ. — Յուշադատարի նօթեր

Ս. Մ. Գաւառ. — Սկզբունք Շարադրութեան. Յր. տակաւ թիւն:

Խճիւղ. — Երկրագործական գաստանդարտութիւն յեր վարժարաններուն մէջ:

Մ. Կ. Մուսթաֆա. — Տարեւորք երկրագործութեան. Բեղնաւորիչ նիւթեր:

Ղ. Բուր. — Այգիքանական. Կոնքեղ. Սեւանեի:

Գ. — Երկրագործական. Բրինձի մշակութիւնը:

Ղ. Բուր. — Շարտարարութեան. Երկրագործութիւն թերթի չանրագիտակի. — Ուղեւորութիւն երկրի կեդրոնը (Ժիւլ Վէրն)

Հանելուկ, Թղթանկութիւն, Ազդ. եւ այլն.

Հատը 40 փարայ

Տպագր. Գ. ԴԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճառարան, Թիւ 44

Ք ա պ ու Լ
 Բ Ի Կ ա
 Ի Բ
 Ս Լ
 Տ Ե Ն Դ
 Ա Ը ա Բ Ի ա
 Փ Ի Լ Ի ա պ ո ս
 Ո Լ Ը ու Լ Կ ու Է յ
 Բ Ի օ Ե ա ն Է յ Ը օ
 Ք ա ս Թ Է մ ու Է ի
 Ո Լ ա շ Ի ն Կ Թ Ը ն
 Լ ու Ը ա մ ա Ը Գ
 Ո Լ ա Ե ն Ի
 Մ Ժ Ե Ղ
 Պ Է ա ն
 Ո Լ Ը մ Ի ա
 Ս Ե Ը Կ Ե Լ Ի Լ

Հանրագիտակի ընթերցողներէն

ՅԱԿՈԲ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Աշակերտ Պէրպէրեան վարժարանի

Իւսկիւտար

Լուծած են արձակ՝

Ա. յտընէն Օր. Զապել Յ. Եղեղճեան —
 Իզմիտէն՝ Օր. Էօփէնի Յ. Նշանեան. — Օր.
 Մաքրուհի Ղազարոսեան. — Իզմիտէն՝ Պ. Գր.
 Յ. Կիրակոսեան. — Պարտիզակէն՝ Պ. Յով-
 հաննէս Ա. Պարտիզակեան, (ուսանող
 բարձր. վարժարանի). — Երզնկայէն՝ Պ. Գա-
 ըեգին Յ. Տմարեան (ուսանող Միաց. վար-
 ժարանաց). — Արարկիրէն՝ Պ. Եղուարդ Տ.
 Պօղաճեան. — Էրզրումէն՝ Պ. Սուրէն Յ.
 Ուղուեան (ուսանող Սանատարեան վարժա-
 րանի). — Գարթալէն՝ Պ. Ե. Յ. Էթմէք-
 ճեան. — Գատը-գիւղէն՝ Պ. Միհրան Գա-
 սարճեան. — Պոլիսէն՝ Պ. Ռուբէն Գ. Տօ-
 լախեան (ուսանող Կեդր. վարժարանի). —
 Իւսկիւտարէն՝ Պ. Յակոբ Ս. Գալֆեան (ու-
 սանող Պէրպէրեան վարժարանի). — Պո-
 լիս՝ Պ. Շաւարշ Միտաբեան:

Իսկ ուսանաւորով լուծած են՝

Իզմիտէն՝ Տիկ. Ազնիւ Գ. Բիւրաեան. —
 Գատը-գիւղէն՝ Օր. Նուարդ Զապէճեան. —
 Իզմիտէն՝ Պ. Յակոբ Ղազարոսեան (ուսանող
 Լուսաւորչեան վարժարանի). — Պարտիզա-
 կէն՝ Պ. Միքայէլ Կ. Աջինսկեան. — Օրթա-
 գիւղ վարժարէն՝ Պ. Մ. Կ. Փորթուքալեան:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

— օ —

Ատաւաղար. — Գ. Շիրինեան Էֆ. — Ձեր
 յանձնարարութեան համեմատ թերթ կը
 ղրկենք Էջմէ գիւղ. շնորհակալութիւն:

Մարգուան. — Ա. Կիւլպէնկեան Էֆ. — Ըս-
 տացած ենք Ձեր և Մ. Տ. Էֆ. Ի բաժնե-
 գինները ձեր յանձնարարած վաճառատու-
 նէն. շնորհակալութիւն:

Կէլիսօլու. — Գործակալ. — Նամակնիդ և
 սլարուհակութիւնը ստացած ենք. յանձնա-
 րարութիւննիդ կատարուած:

Մալիարա. — Գործակալ. — Ստացած ենք
 նամակնիդ, և արձանագրած նոր բաժա-
 նորդները:

Թրիսօլի. — Գ. Յ. Գրչլճեան Էֆ. — Շնոր-
 հակալութեամբ ստացած ենք նամակնիդ,
 բաժնեգինը գանցած, 26 և 43 թիւերն ալ
 ղրկած ենք:

Հալէպ. — Ռուբէն Էֆ. Աճէմեան. — Կըր-
 նաք ուղղակի խմբագրութեանս յղել. նա-
 խորդը ստացած ենք:

Զիւրա. — Ստացած ենք լուծումը:

Զիլէ. — Մ. Ներսէսեան Էֆ. — Դրանը
 գանձուած է. ուղած թիւերնիդ ամբողջ
 ղրկած ենք:

Պարտիզակ. — Ն. Փափագեան Էֆ. — Ձեր
 յանձնարարութեան համեմատ թերթ կը ղըր-
 կենք. շնորհակալութիւն:

Բէսապ. — Ս. Պողիկեան Էֆ. — Ստացած
 ենք ձեր երկու նամակները. նոր բաժանոր-
 դին թերթ կը ղրկենք:

Խօսուհի. — Բոլոր ձեր ուղած թիւերը
 ղրկուած են մէկ ծրարով և մասնաւոր նա-
 մակ:

Իզմիտ. — Գործակալ. — Նոյնպէս. Ա-
 ւանդարեւի ղրանը ստացանք:

Մանիսա. — Գործակալ. — Ընկալագիւր
 կը ղրկենք:

նառ ըսել: Բայց ես հայրիկիս ու հա-
ւատքիս լեզուով աղօթեմ քեզ: Եթե
աշխարհաբարն այսօր հաւատացեալին
լեզուն պէտք է ըլլայ, գրաբարը միշտ
հաւատքի լեզուն պիտի մնայ:

ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԱ

Հայրը. — Տղա՛ս, հետո եկար աղէկ
բայց կը վախնամ որ սաքի տակ երթամ,
չընայի՞ս մէյ մը ի՞նչ բաղձութիւն կ'եր-
թայ կոր:

Պետիկ. — Հայրիկ, մեռնողը շատ
բարի մարդ էր. շատ բարեգործութիւն-
ներ ըրած է:

Հայրը. — Բարեգործ մարդ էր, աղա՛ս:

Պետիկ. — Մայրիկիս ըսաւ որ, հայ-
րիկ, մեր գիւմարի Գէորգ Ագոյն ալ շատ
բարեգործութիւններ ըրած էր. ինչո՞ւ
անոր մեռելին բաղձութիւնը քիչ էր ա-
նանկ:

Հայրը. — Տղա՛ս, Գէորգ Ագոյն հա-
րաւոր չէր. այնուհետեւ Գէորգ Ագոյին
ըրած բարեգործութիւնները մարդ չէր
խանար:

Պետիկ. — Հայրիկ, Պատրիարքը պի-
տի գա՞յ մեռելին:

Հայրը. — Հարկաւ, աղա՛ս:

Պետիկ. — Եյ ինչո՞ւ, հայրիկ, Պատ-
րիարքը Գէորգ Ագոյին մեռելին ալ չե-
կաւ:

Հայրը. — Պատրիարքը քանի՞ հաբի է,
աղա՛ս, որ ամեն մեռելի ելթայ: Հա-
րաւաններուն կ'երթայ, որովհետեւ շատ-
ւոր չեն և որովհետեւ ստակ կուտան:

Պետիկ. — Հայրիկ, Պատրիարքը քաա-
կը ի՞նչ պիտի ընէ: Պանրա՞ն կը դնէ:

Հայրը. — Ատիկոյ չգիտեմ: Բայց ա՛ն
դիտեմ, աղա՛ս, որ մարդս որքա՞ն տակի
մեծ արժանիք ու բարձր գիրք ունենայ,
այնքա՞ն աւելի ստակի պէտք ունի:

Պետիկ. — Արդեօք ի՞նչ ուղուօր դամ-
բանական պիտի խօսի. չիտակը ես ա-
նոր համար հետք կուգամ կոր, հայրիկ:

Պատրիարքը հարկաւ աշխարհաբար քե-
րտեանութիւն ալ կարգադրած է, հայրիկ,
Հայրը. — Ձե՛, աղա՛ս, աղէկ որ կար-
գադրած չէ:

Պետիկ. — Ինչո՞ւ, հայրիկ, մենք կը
կարգանք կոր նէ:

Հայրը. — Երանի՛ թէ չը կարգար,
և խօսածնուդ պէս դրէք, որպէս զի ա-
մեն մարդ ալ հասկնայ:

Պետիկ. — Դաստառունիս ալ, հայրիկ,
իրեն քերականութեան պէս չի խօսիր:
Որ մը աղաչեցինք, սկսաւ խօսիլ. բայց
աչաւքնաւ նոյնքա՞ն պաղ երեւցաւ որ
միեւնոյն մարդը:

ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԱ

Գեղամ. — Ուշադրութիւն կ'ընե՞ս
կոր, մեռելին վրայ դրեթէ խօսա՞յ չի կայ,
ամեն մարդ գրական կաճառին վրայ,
լեզուի վրայ կը խօսի կոր:

Կարպիս. — Ի՞նչ հետաքրքրական է
այս լեզուաբաններուն ու գրագէտնե-
րուն միութիւնը: Միշտ (ի)նչ գրութիւնը
ուելի ազմուկ կը հանէ ու նոր գիտե-
րաւ զոտաճաւ կ'ըլլայ կեղ: Ամենէն ան-
գործնական երեւցող գրութիւնը՝ ամե-
նէն գրական միաբերան կը տիրէ կոր:

Գեղամ. — Նորոգելները միշտ անկա-
րելիին ետեւէն կը վազեն, սակայն բանի
մը կը յանգին. Այդ անսակէտով ան-
շուշտ անդործնական եւե՛ր ըսիք:

Կարպիս. — Ինչի՞ յանգնելին չը գի-
տեմ, բայց գիտեմ որ զրգիւ կ'ըլլան:
Ճին Յակոբին դիտը ինչպէ՞ս էր. (ի)ն
գրաբար, (ի)ն աստուածաշնչական ընե՞լ
կամ գտնե՞լ: Ես ալ, որ ոչ լեզուադէտ
ո՛չ գրագէտ եմ, ես ալ ուրիշ դիտազե-
թիւն մը ըրի, դիտաւածով: Ասի աւելի
հետաքրքրաշարժ է. աւսածս աւելի
ընդհանուր, տիեզերական երեւոյթ մը
է:

Գեղամ. — Ի՞նչ դիտեցիք որ:

Կարպիս. — Ի՞նչ մի դիտեցի: Մեր

չաւրջը (ի)էն զատ բան զրեթէ ոչ կը տեսնենք և ոչ կը լսենք :

Գեղամ. — Բայց ալ կ'ըսեն նէ, առիկայ է :

Կարպիս. — Ինչ ծագրէն : Մտիկ ըրէ : Մեր ճանախկիններուն ու մեր խոհարարներուն պարտադ տեղ Առողջապահութիւն կը քարոզենք. մեր ազգը Առողջապահութեան գլխի չունի, Եւրեք պնդացուցիչ կերակուր իրարու ետեւէ : Առաւել խեղճ ըրի, մաքրողական առի՛ տեւրդ է ըսել՝ հակառակ Տիկնոջ, որ՝ նոր բժշկներուն հետ կը վտանայ որ ներթոյգիէս բան դուրս չ'ելլայ : Եւ հոր կը մնամ եղբւր : Երկան չ'ընենք... Խնեատիրն շիշը բացի : Հագերանական չը զրեւմ որ օրէնքով, այս անգամ աչքս եանտի պատկերին վրայ ինկաւ : Իրա՛ւ առջի մասածումն ա՛յն եղաւ թէ, Եւրպայի մէջ մարդկականի... հեղինակներն անգամ կը պատկերազրուին : մինչդեռ Հայ զրախանութեան հեղինակներն անպատկեր (թէ և) ոչ յաճախ՝ տե՛ղ՝ անպարտական) կ'ապրին ու կը մեռնին : Իսկ եզրորդ զիտադութիւն... դու չակէ... :

Գեղամ. — Եւրպայի մէջ եւ մահանաւորական մասնիկը կայ, սկիզբը դուռած վերջի տեղ՝ ըստ հունգարական սովորութեան... :

Կարպիս. — Աստ ալ կարեւոր գիտ մըն է զոր դարձեալ (ի) գրութեան պարտինք : Սակայն իմն, տե՛ս, կարեւորագոյն չէ : Եւրպայի սկիզբն ալ վերջն ալ (ի) կայ : Մարդկական առի պատկերացոյց. առաւել արթննալուն ինչ ճայն լսեմ փողոցէն : Միւրին էր, Եւրպայի կը պառար, Ինեատիրն ազգեցութեամբ բացաւրու վրայ եզու պարտական կիս գաւառները կ'անակի վրայ բանալով : Տղաս քովի սենեակը բարձրաճայն կը կարգար Ամերիկեան բանաստեղծին ուսանաւորն, Եւրպայի Եւրպայի Եւրպայի Սկիզբն ալ վերջն ալ (ի), իլիմանի : Ազգիկ, որ խաղացի գրացուհիէն խաղա-

լէն դատ կառնէ, սենեակի մտաւ ձեռքը զիրք մը, Եւրպայի Եւրպայի... գարնան չորքոտանի սոխակին տառջին գեղգեղանքը... Եւրպայի Եւրպայի... համար կնոջն պէտք ունեցայ. «Իսկուհի»... :

Գեղամ. — Կարպիս, tu es impayable :

Կարպիս. — Ստեղծում, բանաստեղծութիւն կա՞յ հոս, եղբայր. լսածն՝ տեսածն կ'ըսեմ կար քեզի... Արիտաւանն ու թիւար-Իրաքը մտիկ կ'ընեն կար մեզի, ու... տեղերնուն ալ ելան, գէտի մեր սեղանը կ'ազգուին : Եւրպայի փորձանքի հանգրայեցանք, հիմայ մենք ալ անոնք մերիկ պիտի ընենք : Արիտաւանը գարնջուրը տկամայ կուլ տուաւ : Հիմայ ընկերայը պիտի խօսի : Ահա՛ « Զրա՛ր որ մեզի, — նման Եւրպայի, պիտի ինկիլիկ — պիտի խոսնուի. առիկայ մեզի, — պէս բան մըն էր տար, կ'սկսէր հեղինակ — Թիւար Եւրպայի քեզի... : — Եւրպայի կուլայ որ, նման բեհեղի — հաղաւտս կուլի, — կուլի ու կուլի, — տակ պիտի կեզի. — հաղաւտար կարեց Եւրպայի, Եւրպայի, — վեց ինկիլիկ. — քաւ Եւրպայի քեզի, — տուր լիւրսն ինծի. — տեղ գնե՛լ ինծի՛ անպիտան Եւրպայի, — խոցընել առ կեղծ պիտան ինկիլիկ... »

Կարպիս. — Թիւարը յարձակման կը պատրաստուի կար. « Ո՞ր Եւրպայի մէջ չի կայ Եւրպայի. ո՞ր շոգենալին, ո՞ր շոգեկառքին մէջը չիկայ, Եւրպայի, կրակ ու շոգի. նաեւ ո՞ր կ'ալի մէջը չի կայ կուլ կեւրտիրիչ կուլի, որ այնչա՛մ ա՛յս՝ այժմ կուլայ թարի, ինչպէս Եւրպայի մէջի Եւրպայի, փայլ ու թարմութիւն տայ տառատակի : Յանդիմանութիւն կ'ընեն թիւարի. բայց դուն կարգացած ես գիրքը Եւրպայի, կամ միւս այն գիտուն Սրբ ճօն Եւրպայի. նորեւել գըրո՛ղ, Եւրպայի քերթո՛ղ, կարգաս դուն մինակ խեւ Եւրպայի Եւրպայի անհաղի. սրանց որ տիպն հո՛ն Եւրպայի՛ նորագի, զիտե՛ս դուն, պարո՛ն, ինչ է նոր ոգի. զիտե՛ս

մանաւանդ ո՞վ է թիւաբի, խըմած ե՞ս
երբէք թէյ ու Բեմ-Գե...»

Պետիկ. — Հայրիկ, Վեր-Եւ ելեր է. ու
չաւանուած խոշորութիւնով. նայէ՛, նա-
յէ՛, Գայէ՛, երկու Վեր-Եւ, մարդ ո՞ւր է:

ԳՐԱՍՏՐԱՏՈՄ

ՅՈՒՇԱՏԵՏՐԻ ՆՕԹԵՐ



Կը դարձնեմ մէկիկ մէկիկ՝ ամէն մէկ ե-
րեսի, ամէն մէկ տողի, ամէն մէկ բառի տա-
լեւ յազմամբ պահ մը կանգ առնելով՝ թեր-
թերը յիշատակներու հին գրքին: Հոս գիւ-
ցողներգական կայտառ կեանք մըն է որ տ-
րեւի մը պէս ինծի կը խնդայ, անդին՝ ամ-
բողջ շարք մը կերկրնայ մէջ ընդ մէջ միջա-
դէպերու, տարփանքով սկսած, խօշ վազքե-
րով շարունակուած ու հոսի մառապետով
մը վերջացած: Անկիւն մը մատիտով տեղա-
գրծուած, սուտնց թուականի (աւրուած ըլ-
լալուն) ժամադրութիւն մը բարեկասկի մը
հետ՝ պտոյտի մը համար՝ դէպի լուսաւոր
ու խորալին կատարը խորիտ Մօտային, հո-
գեշաղկա՛ղ քոյրը Գրասէր Ատոմի միացող
սրտին...: Եւ բոլոր այս բարախուն ու թէ՛
գողտնտալահ տեսիլներուն առջեւ, որոնք
հեռաւոր անցեալէ մը կուգան կը սցաւին յի-
շուրթեան ու նայուածքիս հանգէպ, չեմ
կրնար ծածկել զարմանքս, ոչ ալ՝ տրամու-
թիւնս: Զարմանք՝ պայմանաւոր ու սրգաթիկ
կեանքին համար որ մարդուն է եւ արամու-
թիւն՝ բոլոր ռամիկ ու միօրինակ բաներուն
դէմ որոնք մեր հագիլն վսեմ ձգտումներուն
կը հանգիւղին:

Բայց բոլոր ատունք չար են նայն իսկ ի-
րենց ամենէն անկեղծ արտայայտութեան
մէջ՝ այդ յիշատակները, որովհետեւ կը ցըն-
ցեն, կը լացնեն կամ կ'արխենեն: Ու կը մը-
տադրեմ, ցաւագին ընթերցումէ մը վերջ-
ջնջել, անէպցնել այդ մասունիկը, ու գիւտ-
ին ծիծաղով մըն ալ՝ ժպտիլ մոխրակոյտին

առջեւ որոր որ անցեալ յայտնու կամ կրող-
ներու մոխիրները ցոյց կուտայ ինծի...

Նախ գնդապետով մը՝ սիրոյ էջերը կը
ծակծակմ: Անգութ կամ հեգնոտ այդ վեր-
յաւաններուն, այդ Միւսէական դարկահար
անուրջներուն մէջէն մէկ քանիննիր, էն փայ-
փայելիները հոգւոյս մէջ կը պահաւորին: Ա-
նոնք որ սրտիս շատ մօտիկ, սրտիս մէջն են
արդէն, կ'անջատեմ զանոնք, եւ փախ ու
տխեղծ այդ յաւերը կը բաղձամ, դրձի պա-
ցումով մը, յաւերժացնել:



Ատոնց մէջէն կը նախընտրեմ վերջապոյ-
տուն այց մը Մօտայի մենաւոր սրտին, ա՛յն-
չափ տաք ու հեշտագին է ան եւ այնչափ՝
իր մէջ կը պարունակէ բարախուններ, երա-
զանքներ, պատրանքներ: Սեպտեմբերի տըժ-
գոյն «նաթիւն-մութ» մը, անբաղդատելի,
վեհաշու՛ք: Կարծես բնութեան նուազումն է՝
երկինքի ու ծովու լուսաւոր համայններուն
մէջ: Քորոյի վսեմ նկարչութեան մէկ անհու-
նաթիւր՝ այդ պատկերը՝ Հեռուէն մտադրող
կը յաւաքանտնք: Կը յիշեմ, օհ, շատ կը
յիշեմ, ամենէն հին լուսն ամենէն ալ թարմ
այդ անցքը: Մեր շուրթերուն վրայ կը թրլ-
թըռան արդէն Վէսլենին, այդ հրէշ-հրէշ-
տակին Nevermore նուագին (sonnet) առա-
ջին տողերը: Մտաւզիներուն մէջէն, թաւ,
խորանի ստուերներուն տակ ու անհուն
վերջապոյտի մ'առջեւ, մեր զանազան բաղ-
ձանքները, մեր տղու անմեղ երազները,
տեղերը, յաւանտո կամ փառատիրական,
միջակ կամ ուժգին, տխուր կամ սիրազին,
մեր ծոյլ քայլերուն նման կը պտայցնենք:
Սրբապոյտի մ'առջեւ ենք հոտած, Մօտան,
խորան մը խրտապաւնած բնութեան որուն
առջեւ խնկաման-վերջապոյտը կը բռնկի, կը
մխայ...

Երջանիկ ենք այդ հսկայաթեանց հան-
դէպ: Ռամիկ, գաճաճ բան չկայ հոգ, մեր
չուրջը: Ամէն բան է՝ վսեմ, տխուր, վեհա-
տեսիլ՝ այդ Մօտան: Սրբապոյտ, ուխտաւե-
ղի, մենարան, թատրոն, ճեմարան: Ու յե-
տոյ, ժամադրաւոր մը բոլոր գեղեցիկ տա-
ղանդներուն, որոնք կանգ առած են հոգ,
զմայելու, լուրու, անհոնք ծծելու... Այդ

մեծաւոր սարին վրայ, հեռուէն կամ մօտէն, տեսած եմ Եղիան, Պայրընապաշտ Որբերեանը, Փանթապոն, Անայիսը, Եւտերպէն և այնչափ ուրիշներ:

... Մութը կ'իջնէ տակաւ: «Նաթիւռմաթ»ը կ'սկսի աւելի ամբողջիկ, աւելի տարտամիկ: Լցս-խաւարին մէջ, ստուեր մը կը նշմարենք մարդկային, գերմարդկային: Վախով մը՝ ալ չենք մօտենար: Այլքներ խոճերուն դարձուելով, տերեւներ ծառերուն վըրայէն ցաւատանջ բրթելով ու խնայով՝ մեր անձկութիւնը կը լայնցնեն: Արհաւիրք մը կը պտուտի մեր հոգիներուն մէջ: Բայց տակաւ, երբ անդունդէն վար՝ անդունդին մէջ կը նայինք, միշտ իր տեղը կը տեսնենք այդ անձանքով ոգին, այդ ուրուտկանը, անշարժ, արձանացած, ձեռքերը խաչած, «մութիւն» սղօթի մը մէջ, ու երեսը՝ երկնքին լցակրուն դարձուցած...:

Փախչիլ կ'ազնեք, բայց այդ ահաւոր ու մեղամաղձիկ նկարը կը թողէ, կը մագնիսացնէ մեր սիրտերը: Անհունին դէմ իր այդ ծնրագիր պաշտանքը մեզ մեր հաւատքին մէջ աւելի կը գամէ: Սրտապնդած՝ իր ծաղրանկարը կը դիտենք հիմա ջուրերուն հայելիին մէջ, բայց իր փախուքը չենք լսեր... Ու յանշափս կը տպաւորուինք գիշերային համայնապատկերէն:

Եւ ուրիշները կուգան՝ իշրուիլ ծնկաթիւն դէմ, օրորուն, երազուն: Լուսնակը լուսնչէն սխտ մը կը պտակեցնէ՝ ծովին բիւրեղ մարթին վրայ: Հարստ լռութիւն մը կը շրջապատէ ամէն կողմ: Ու մեր հոգիներուն մէջ այս անգամ հեշտայի երգ մը կը գինովնայ: Ալ վախ չկայ անոնց խորը, այլ անբաւարարի, երկնային գմայլանք մը բնութեան համար ու անձանքին համար: Եւ անձանքով միշտ հոն է. իր յուսահատական արձանացումը կը դիտենք, և իր փարսմը՝ վիհերուն, և իր գաղաղութիւնը՝ անհունին խորհրդին դէմ. կարծես ծովային հսկայ խեցեմարթ մըն է որ ժայռերուն փակած կը խուկայ...:

Ժամերը կը հնչեն ագտմանդ լռութեան մէջ. լուսնակը հիմայ իր ամբողջած պտուիկը կը խալցնէ ջուրերուն վրայ: Պատկերը անխմանալի է և մարդկային մտածման հոգ՝ այդ «ափըմբունի»ին առջեւ՝ գերազանցա-

պէս տխուր: Ու յանկարծ, ոգին, անձանքով ոգին կ'ենէ կը կանգնի, երկայն նայածը մը պտացնելով իր շուրջը, միշտ մպտտանջ, միշտ խոհուն, միշտ անհուններէն հեռ մը տերիմ...:

Եղիան է...

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒԲԼԻԱՆ

Պարտիզակի բարձր. վարժարանի առաջնակարգ ուսուցիչներէն՝ Ս. Մ. Գառապեան էֆ., որ արդէն ժանօթ է իր ԳԻՐՈՅԱՎԱՐՈՒԹԻՒՆ անուն հրատարակութիւնով, այսուհետեւ յաջորդական յօդուածներով պիտի գրէ շարադրութեան սկզբունքներուն վրայ, որուն սկզբնաւորութիւնն ըրած ենք թերթիս 55րդ թաւին մէջ:

Գառապեան էֆ. խիստ օգտակար ճիւղ մը կը բանայ, ուրիշ ոչ միայն դպրոցականներ, այլ մինչեւ խոյ շատ մը ուսուցիչներ պիտի կրնան օգտուիլ:

—o—

ԳԼՈՒԽ Ա.

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆԸ՝ խորհուրդի բացառութեան պայծառութիւնը, թափանցիկութիւնն է:

Մեր խորհուրդը մեր գործարձակ բառերուն միջոցով տեսնուելու է՝ ռաւանց մեր դիմացինին ժամանակի և կարողի փառնում պատճառելու: Մութիւն, շողիւն, փռիւն՝ գերծօղը ինչ որ է հեռակայ բութներուն, փայտերուն ու ծառերուն՝ մեր լեզուն ալ այն ըլլալու է իր պարունակած խորհուրդին: Ռոտիկեաւ բան մը հազարդերու համար կը խօսինք կամ կը գրենք, մեր նպատակէն մը վրայինք՝ եթէ յստակաբանջ չըլլանք. այս պարագային մէջ լու է խնայել մեր խեղճուկ աշխատութեան: Բաւական չէ գործածել ը-

զու մը որ «Կորինայ» հասկցուիլ, այդ պարտական ենք գործածել լեզու մը որ հասկըցութի տեղան և սրտակիր:

Մեր գիտացիներն ուշադրութիւնը որքան որ հաղորդակցութեան միջոցին հրաւիրուի՝ նոյնքան ալ կը հեռանայ հաղորդուած խորհուրդէն: և այս կը պատահի մինչև իսկ այն տանն՝ երբ միջոցը վերած է թերութիւններէ: Ո՛րքան առկա մեծ կ'ըլլայ շարիքը երբ միջոցը աւարկան միտադնէ կամ փոփոխէ:

Ինչպէս որ իրաւունքը չունինք սերիւնն ստացուածքը անհեշտ՝ առանց փոխադրութեան, նոյնպէս ալ իրաւունքը չունինք արիւնին ժամանակին աւարտին առնելու՝ մեր մտքը հարկնալու համար զանի խաղաղութեան միջոցներով: Ուրեմն՝ յստակաբար ըլլալը, ի՞նչ խօսքով, ուղղամիտ ըլլալ բոլորէ:

Յստակութիւնը այն է շարադրութեան միւս յատկութիւններուն՝ ինչ է որ ըստ գոյններուն: Լոյսով է որ գոյները գոյութիւն ունին ու կը տեսնուին. յատկութիւնով է որ շարադրութեան միւս յատկութիւնները երեւան կազմենք ու խորհուրդները պայծառութեն կը ներկայանան:

Յստակութիւնը կախում ունի կարգ մը սրայմաններէ, որոնց իւրաքանչիւրին վրայ պիտի խօսինք ուրոյն յօդուածով:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ԲԱՄԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

—o—

Բառերու ընտրութեան հայեցակէտով՝ Յնտակութիւնը կախում ունի:

1. Հայերէն բառերու գործածումէն.
2. Հոյ բառերու հայացի նշանակութիւնով գործածումէն.
3. Մեր զգացիներն ընտանի բառերու գործածումէն.
4. Միանշանակ բառերու գործածումէն.
5. Դերանուններու զգուշաւոր գործածումէն.
6. Կապակցող բառերու խնամով գործածումէն.
7. Տեղակային բառերու գործածումէն:

Պարտիզակի խոսքով յայտնի է Ս. Մ. Գրաւորանի խօսքով:

ԵՐԿՐԱԴՈՐԾԱԿԱՆ ԴԱՍԽԱՆԴՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՎԱՐԴԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵԶ

Այսօր անվիճելի իրողութիւն մըն է թէ առանց երկրագործութեան՝ աղք մը, ժողովուրդ մը չի կրնար անտեսական զարգացում և իրր անօր անմիջական արդիւնք, բարոյական զարգացում ունենալ: Արդէն քանիցս շեշտած ենք երկրագործութեան արարական գիտելիքներու ուսուցչման պէտքը՝ մեր վարժարաններուն՝ մանաւանդ գաւառական ու գիւղական դպրոցներուն մէջ. ուրիշ ելլող աղաք մեծ մասամբ երկրագործ կ'ըլլան ապագային. ուստի առկա չէ՞ լլար փոխանակ կարգ մը աւելորդ ուսումներով աղոց միտքը խճուկելու, առանգել անոնց անհրաժեշտը. այսօր քաղաքակիրթ եւրոպա լաւ հասկցած է թէ այդ անհրաժեշտը Դիւղատնտեսականն է, ուստի եւ առանց բացառութեան, բոլոր վարժարաններու մէջ Դիւղատնտեսական դասեր կ'աւանդուին:

Հանրագիտակի համակրելի աշխատակից, ու իր երկրագործական յօդուածներովը ծանօթ Մալաքեան Էֆ. յոր նմանի երկրագործական վարժարանի շրջանը աւարտած ու Մօնթէլիէի համալսարանէն գիտութեանց ու դպրութեանց պատկաւորի տառիճանն ընդունած է, և այժմ Սիլիվիի աղջային վարժարանի անօրէնութիւնը կը վարէ, միւստափր է հրատարակել ՏԱՐԵՐԲ ԵՐԿՐԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ, անուն գառադիւր մը, որմէ նմայշ մը զրկած է մեզ, զոր նոյնութեամբ կը հրատարակենք: Սոյն դրածը, մասնաւորապէս, նախակրթարաններու համար պատրաստուած պիտի ըլլայ:

Անտարակցս ամէն դովետաի արժանի պիտի ըլլայ Մալաքեան Էֆ.ի սոյն աշխատասիրութիւնը, որ կու գտնի կարեւոր սրտին մը լրացունել մեր գիտական գլորքերու ցանցաւ շարքին մէջ:

ՏԱՐԵՐԲ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ԲԵՂՆԱԻՈՐԻԶ ՆԻԻԹԵՐ

1. ՆԱԽՆԱՆԻ ԴԻՏԵԼԻՐ

ՍԱՀՄԱՆ. — Հոգը աւելի բեղնատուր, բարերար բնելու համար ինչ նիւթ որ անոր վրայ կ'աւելցնենք, Բեղնատուրիչ նիւթ կը կոչուի :

Հոգը բարերար բնելու համար երկու գործողութիւն կը կատարենք. «բարեւորում» եւ «աղբում» :

Հոգը «աղբել» կը նշանակէ անոր վրայ աւելցնել տեսակ տեսակ աղբեր (մարդու, եղանակ, ոչխարի, թռչունի) նեխած կենդանոջին մարմիններ եւ հանքային զանազան նիւթեր որոնց բոլորն ալ բոյգերուն «խոր սնունդ» պիտի ծառայեն : Ուրեմն աղբումն նշանակուի է բոյսերուն սնունդ տալ :

Հոգը «բարեւորել», քնդհատեալը սղլու-մէն բարբառի տաղբեր բան է : Բարեւորումն նշանակուի է մասնաւորապէս հոգին ֆիզիքական յատկութիւնները փոխել. օրինակի համար եթէ հոգը շատ կոշտ ու խիտ է (կաւաւ հոգեր) զայն թեթեւցնելու է մշակութեան աւելի յարմար բնելու համար. նոյնպէս եթէ շատ թափանցողիկ ու թեթեւ է (աւաղաւ հոգեր), պէտք է քիչ մը աւելի խիտ ու սերտ ընել զայն :

Այսպէս երբ հոգ մը շատ կաւաւ է, անոր խտնուելիւնն ու անթափանցիկութիւնը նւազելու համար այդ հոգին հեռ կը խտնեն «կիր» փոքր «մարնահոգ, որոնք կաւին գէշ յատկութիւնները կը շափառորեն, որով հեռու «կիրն» ու «մարնահոգը» բարեւորիչ նիւթեր են :

ԾԱՆՈԹ. — Իբրեւ ծանոթութիւն աւելցնենք համարէ որչափ որ «աղբումը» եւ «բարեւորումը» իրարմէ տարբեր գործողութիւններ են, սակայն ամէն «աղբում» հոգը բարերար ընելէ զատ, միեւնոյն ատեն հոգը կը բարեւորի, նոյնպէս ամէն բարեւորում քիչ մը հոգը աղբում կ'ըլլայ : Ուրեմն երբ արտին վրայ

կենդանային կամ հանքային աղբեր աւելցնենք, որոնք բոյսերուն սնունդ պիտի ըլլան, հոգը քիչ մը թեթեւցած կ'ըլլանք. ու այսպէս գիւրաւ կը հերկուի եւ աւելի թափանցողիկ կ'ըլլայ :

2. ԲԱՐԻՈՒՌԱՄ

ՍԱՀՄԱՆ. — Հոգը բարեւորել կը նշանակէ այդ հոգին ֆիզիքական թերութիւնները ուղղել. այսինքն՝ եթէ հոգը շատ «խիտ» է, զայն «թեթեւցնել» : Եթէ շատ «թեթեւ» է, զայն խտացնել :

Նոյնպէս Դարեւորումը կը նշանակէ նաեւ հոգին մէջ գտնուած շատ մը նիւթերու լուծման, պոնք պիտի ծառայեն բոյսերուն իրեն սնունդ :

Գարեկի է ամանք խոհին որ բարեւորումն վերջ, հոգը պէտք չէ աղբել. ոչ. բարեւորում եւ աղբում իրարմէ տարբեր են : օրինակի համար եթէ կաւաւ հոգի մը հեռ խտնենք կիր կամ աւաղ՝ հոգը կը բարեւորենք. ինչպէս հոգը բարեւոր բնելու համար պէտք է նաեւ աղբել :

Գլխաւոր բարեւորիչ նիւթերն են. «կիր», մարնահոգ, գաճ, աւաղ, կամիճ, թորպա-հոգի մոխիր» են :

ԿԻՐ ԵՒ ՄԱՐՆԱՀՈԳ. — Այս երկու բարեւորիչ նիւթերը կրծային են եւ կը գործածուին մասնաւորաբար կաւաւ հոգերը բարեւորելու համար. զանոնք աւելի թեթեւ եւ զիւրաւ հերկելի բնելու համար :

Մէկ արտաւոր հոգի համար 250—300 օխա կիր կը բաւի :

Մարնահոգը տեսակ մէկ կրաքարի (կիրի բնածխտ) եւ կաւի խտնուրդ է. զորը զայն մ'ուշի եւ Զարի ու սաւումն աղբեցութեան տակ, կտոր կտոր կը ձեւորուի ու կը փռւի խմայ :

Մարնահոգը կիրէն 8—12 անգամ սւելի չափով մը կը գործածուի :

ԳԱՃ ԵՒ ԹՈՒՐՊԱՀՈԳԻ ՄՈՒՐ. — Գաճը քիմիապէս կիրի ծծմբատէ. իսկ թուրպահոգի մոխիրը՝ որ ճահիճներու մէջ տճած ու չորացած բոյսերու այլաւելին աւաղ կուգայ՝ կապուած է կիրի բնածխտաւ :

Այս երկու բարեւորիչ նիւթերը շատ օգ-

տակար են առայտի դաշտերուն և ընդհան-
րապէս բոլոր մարգերուն համար :

Մէկ արտավար հողի համար 20—30 օրս
գաճ և 150—200 օրս թուրպահողի մու-
խիր բաւական են :

ԱՒԱԶ, ԿԱԽԻՃ, ԿԱԽ. — Եթէ հողը չաւ-
փագանց կաւուտ է՝ աւազ ու կաւիճ կը
գործածենք հողը թեթեւցնելու համար, իսկ
եթէ հողը կրաքարոտ, աւաղուտ է, այ-
սինքն թեթեւ, պէտք է գործածել կաւը :

Յ. ԱՐԳԱՍԱԽ ՈՐՈՒՄ

ԱՂՐԻՆ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ. — Աղբերը
չառ մեծ դեր կը խաղան բոյսերը սնուցա-
նելու՝ որով աճեցնելու մէջ. այժմ առածի
կարգ անցած է թէ Քառանց սղորի առատ
հունձք չկայ և առանց առատ հունձքի
կարգու չաճ չկայ :

Արկրաքարձը պարտի այլ սկզբունքը մրտ-
քի՞ն ստջեւ ունենալ, նամանաւանդ երբ կը
մշտնէ այն տեսակ բոյսեր, որոնք չառ սնուն-
դի պէտք ունին. ինչպէս դեմոտինձորը,
ճակնդեղը, որթատունկը ևն :

Աղբին կարեւորութիւնը ցուցնելու համար
բաւականանանք ըսել թէ՝ միջին հաշուով հող
մը առանց սղորի 1ին 10ը կ'արտադրէ. իսկ
եթէ որտեղ լաւ աղբուած է, 1ին 20—30
կ'արտադրէ, ինչպէս որ մօակն տեսած ենք
Ձրանասլի մէջ :

ԱՐԳԱՍԱԽՈՐՈՒՄ ՆԻԹԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արգաւաւորիչ նիւթերը երեք տեսակ են.
Ա. «Կենդանային բեղմաւորիչ նիւթեր»
որոնք են «աղբը, կենդանիներու մնացորդ-
ները, մարդկային փոշիացած աղբ, կուանօ,
աղաւնիներու աղբ» ևն :

Բ. «Բուսոցին արգասաւորիչ նիւթեր»

Գ. «Ջանքային արգասաւորիչ նիւթեր»

Մարդոց ձեռքով պարտաստուած հան-
քային կամ կենդանային աղբերը կը հոշուին
նաև փաճառակամական աղբի :

Երբ

Սիւնի

Մ. Կ. ՄԱՆԱԲԵԱՆ

ԱՅԳԵԲԱՆԱԿԱՆ

Որթատունկի փնտաւար միջատներ և մակա-
րուծային հիւանդութիւններ. — Կոնքեզ. —
Սեւանիս :

(Շար. թիւ 54 էն)

Բացատրենք հիմա կանքեղները ոչնչա-
ցնելու գործնական միջոցները, որոնք եր-
կու տեսակ են. առաջինները կը գործադ-
րուին ձմեռն մէջ, իսկ երկրորդները ա-
մառը :

Ձմեռն եղանակի մէջ գործադրուածներն
են՝ կեղեւներու մաքրում, կրպատում (պա-
տանա), և ևւացած ջրով լողանք : Առաջին
երկու միջոցներու վրայ ընդարձակօրէն
գրած ենք արդէն (տես. Հանր. թիւ
26, Պարտիզ. կենդանաբանութիւն), ուստի
հարկ չկայ հոս կրկնել, և կը յոնձնարա-
րենք ուշի ուշով կարգաւ դանտք, ու ըստ
այնմ շարժիլ :

Եւացած ջրով լողանքը կը կիրառեն
ձմեռը, որ արդէն այգին բուսականութեան
մէջ չի գտնուելով, երբէք չի փնտաւոր,
մինչդեռ կոնքեղի և ուրիշ միջատներու
թրթուրները, կծիճները և հաւկիթները
խաշելով կ'ոչնչանան :

Եթէ դժուարին կէտ մը կայ այս դրոշ-
միճելը կիրառելու մէջ, այն ալ՝ մանաւանդ
ընդարձակ այգիներու համար, գործիքներու
մասին կանոնաւոր կազմակերպութիւն մ'ը-
նեն է, որ գործադրութիւնը դիւրին և
միանգամայն խնայողական ըլլայ :

Ահաւասիկ սակայն, թէ ինչպէս կը
կատարեն :

Հին տոհմները սլարգապէս այգին մէջ
կրակ վառելով, վրան կաթնայ մը կը դնէին
և ջուրը կ'եռացնէին. բայց հիմա մօտեա-
ւորապէս խաղովակաւոր կաթնաներ կը
չինուին, որու կրակարածք՝ չոգեշարժ մեքե-
նաներու պէս իր տակը յարմարեալ է,
և ուղղուած տեղը կը փոխադրուի : Բայց
որովհետեւ գաւառներու մէջ այս տեսակ
կաթնաներ գտնել դժուար և մինչեւ իսկ
անկարելի է, կրնան՝ եթէ ուզեն, թէյի
նշմաղարներու նման խոշորիկի սէմալար-
ներ չինել տալ, և անոնց մէջ ևւացնել

Ջուրը, որ թէ դիւրատար և թէ խնայողական կ'ըլլայ:

Գործ ողութիւնը կատարելու համար վեց հոգի պէտք է, որոց մին կրակարանը միշտ վառ կը պահէ, եւ ջուրը եռացած վիճակի մէջ: Միւսը շարունակ ջուր կը մատակարարէ կաթնային. մնացած չորս անձերը, որ կին կամ տղայ, ջրկիճներով (եղարքը) կաթնային ջուրը կ'առնեն եւ որթատունկերը կ'ուռագեն: Իւրաքանչիւրին ջրկիճը, որ մէկ ժնայի չափ ջուր կ'առնէ, քովքնտի երկայն եւ կորավիզ խողովակ մը ունի. երբ կաթնային լեցնեն իրենց ջրկիճը, փութով կը տանին որթատունկերուն վրայ, ու վարէն սկսելով կ'ուռագեն, եւ հետզհետէ վեր կ'երնեն, միեւնոյն անգամ մեծ ուշադրութիւն ընելով բոլոր ծախած ու կերուէն եւ ճեղքուող քներուն:

Կաթնան կը զետեղեն յարմարագոյն տեղ մը: Եղարքն որ եռացած ջուրը տանալ անձերը չի պարտաւորին երկայն երթեւեկ մը կատարելու: Կաթնային մինչեւ վերջին որթատունկը պէտք է ըլլայ առ առաւելի 15 մէթր, աչքով չորս շրջանակի կը բաժնեն տարածութիւնը, եւ իւրաքանչիւրին մէջ մէկ անձ կը գործէ. երբ այդ շրջանակը լրանայ, այն ատեն կաթնային տեղը կը փոխեն, եւ այսպէս շարունակաբար, մինչեւ որ այգին լինայ:

Դարմանումի ամէնէն յարմար ժամանակն է փետրուար ամիսը. ցուրտ երկիրներու մէջ մինչեւ Մարտի 15ը. իսկ քանի տաք երկիրներու մէջ մտնենք, այնչափ աւելի կանուխ: Եւ որովհետեւ եռացած ջուրի լոգանքը լաւ արդիւնքներ կուտայ, չափ տեղեր կը կիրակրեն, եւ հիմա փոխանակ ջրկիճներով ջուրը կրելու, հնարած են տեսակ մը չողեծին (générateur) կաթնաներ, որոնք անիւներու վրայ գետեղուած ըլլալով, դիւրաւ կը տեղափոխուին: Կաթնային վրայ մասնաւոր ծորակներ կան, որոնց վրայ պլտուտակով (վիտա) կը հաստատեն ծայրերին խիտ բարակ ծակով վերջաւորուած մէկ կամ երկու քառաչափ (լաստիկ պորտ) խողովակներ:

Այս կերպով ջուրը ուժգնութեամբ կը ցատկէ, և մանրամալ փոշիի պէս մաղուելով, ամէն ծակ ու ծուկ կը մտնայ: Անոնք

որ իրենց ագարակին մէջ չողեչարժ մեքենայ ունին (անիւի վրայ հաստատուած), կըրնան այս սարագային գործածել, իր վրայ յարմարցնելով քառաչափ խողովակներ: Այս խողովակներու երկայնութիւնը 10 մէտրը անցնելու չէ, որպէս զի ջուրը մինչև ծայրը գացած ատեն չի պաղի:

Թէեւ այս միջոցը գաւառացիներու համար գործադրել կարելի չէ, քանի որ պէտք եղած կազմածը դիւրութեամբ չեն կրնար ձեռք բերել, իսկ գաղափար մը կազմած ըլլալու համար դրինք հոս:

Ոմանք կը յանձնարարեն ծծումբ այրել որթատունկերուն տակը. ահաւանիկ թէ ինչպէս:

Մէջ տեղէն կարուած տակառներ կ'առնեն, որ երբէք ծակ ունենալու չէ. և բռնել վերցնելու համար երկու կողմէն մէյմէկ կ'ոթեր կը հաստատեն:

Ծծումբի կապը յառաջ բերելու համար կը գործածեն պարզապէս ծծումբի պատուրդներ և կամ սովորական կտրտած ծծումբի գաւազանիկներ (լիւլէ քիւքիւրտ):

20 կամ 25 հատ տակառով մէկ հոգի մը օրը 5 — 6 արտավար (աէօնւմ) տեղ կրնայ ծծումբ խել. և ահաւանիկ թէ ինչպէս կ'ընեն:

Երկաթէ թիթեղներու վրայ մէկ քանի մանր կտոր ծծումբ կը դնեն՝ վեր ի վերայ 3 տրամի չափ. իւրաքանչիւրը կը զետեղեն որթատունկերու տակը. և առաջինէն սկսելով կը բռնկցնեն. երբ մուխերը սարած իլ սկսին, այն ատեն կիսատ տակառը վրան կը ծածկեն, եզերքները քիչ մը հողով կը գոցեն, որպէս զի օդ չառնէ ներս. երբ վերջի տակառը զետեղէ, առաջինին տակը այրած ծծումբը արդէն իր գործը աւարտած ըլլալով, ետ կը դառնայ, կը վերցնէ, և կանցնի միւս կարգին:

Կարելի եղածին չափ պէտք է օդը հանգարտ և պայծառ օրերու մէջ կատարել գործողութիւնը. և եթէ օդը անձրևի դառնայ, կամ միգամած ըլլայ, գործողութիւնը յետաձգելու է, որովհետեւ օդին մէջ գտնուած խոնավութիւնը գոյացած ծծումբի թթու կլին մէկ կարեւոր մասը իր մէջ կը լուծէ, որով և անապեղելի կը մնայ դարմանումը: Զի մոռնանք նաեւ ըսելու որ, եթէ ու է պատճառաւ գործողութիւնը ընդհատէք մէկ քանի երկար ժամերու համար, պէտք է

ծածկուած որթատունկերու վրայէն տակառները վերցնել, որովհետեւ՝ ծծմբուկի թթւութիւնը երբ երկար ատեն հազորդակցութեան մէջ գտնուի որթատունկերու հետ, կրնայ վնասակար հետեւանքներ յառաջ բերել, քնացող աչքերը կուրղնեցով. ահա՛ այս պատճառաւ նաեւ, երբ բուսականութիւնը արթննայ, պէտք չէ երբէք ծծմբածխում կանաչել:

Մէկ արտավար այգիի համար վեր ի վերայ 7—8 օրոյ ծծումբ պէտք կը լըայ, որու խառնանշիւրը 60 վրայէն հաշուելով 10 զրուշի չափ ծախք մը կը լըայ:

Բայց մի միայն որթատունկերը դարմանելով այդ վնասակար միջատներու տառջը չառնուիր. եթէ սովորութիւն ունիք որթատունկերը խաշարելու (պազըք դնել), պէտք է անոնք ալ եռացած ջուրի մէջ խաշել, և կամ հետեւեալ բաղադրութիւններէն մէկուն մէջ թուղ 2 օրի չափ.

1.—Պղնձի ծծմբատ (կէօզ թաշը) 5 քաշ

Ջուր 100 »

Եւ կամ՝

2.—Երկաթի ծծմբատ (զաճը գպրըզ) 10 »

Ծծմբական թթւութ (զաճ եաղը) 3 »

Ջուր 100 »

Ամբան մէջ գործածուած միջոցները հետեւեալներն են.

Թիթեանիկները գիշեր տունն ուր որ լոյս տեսնեն, անոր շուրջը կը թափառին. տարիադիմանալով, տեսող մը թակարդ կը լարեն թիթեանիկները աշխատելու համար, որ հետեւեալն է.

Երաւենէն քառասուն հար. մէդր երկայնութեամբ և քսան հար. մեդր տրամագծով թիթեղէ կանթեղներ կը շինեն առանց ստակիի, որու տեղ կը փաթթեն կանթեղին կմախքին վրայ՝ մածուցիկ նիւթով մը ծածկուած թուղթ. կանթեղին մէջ կը փռեն ճրագ կամ քարիւղի պղտիկ լամպար մը. այսպէս պատրաստուած կանթեղները կը գետեղեն այգիին մէջ՝ տեղ տեղ, դետնէն 20 հար. մէդր բարձր ցիցերու վրայ. և ինչպէս դիտենք հիմա, թիթեանիկները կանթեղի լոյսը տեսնելուն, դէպ անոր կը դիմեն խուռներամ, և կանթեղին մօտեցած ատեննին մածուցիկ նիւթին վրայ փակելով

հոն կը մնան: Ահաւասիկ թէ ինչպէս կը պատրաստեն այդ մածուցիկ նիւթը.

Ճերմակ ձիւթ (չամ սագըզը) 2 քաշ

Բեւեկին խէթ (թիթեղէն) 1 »

Կտաւասի իւզ (պէզիր եաղը) 1 »

Ձիթաիւզ (պէշթին եաղը) 1 » 100 տրմ.

Ասոնք իրար կը խառնեն, կը տաքցնեն և եփ մը տալէ վերջ վար կ'առնեն, որով պատրաստուած կռնենան տեսլի մը ստուղ (էօքսէ), զոր կը ձեփեն թուղթերուն վրայ խաղանակով մը, և կամ փայտի մը ծայրը լաթի կտոր մը կապելով, կը թաթիկեն այդ ստուղին մէջ, և կը քսեն թուղթին վրայ. այս վերջինը կանթեղին բոլորովն գետեղելէն վերջ:

Թիթեանիկները որտալու միջոցը կը կիրարկեն նաեւ ցորեկը, որ հեծեալ կերպով կ'ըլայ:

Ուզորի ճիւղէ (սորլուն՝ որ ջուրերու եղերքները կը բուռնի, և ցեղակից է ուռենիի (սէօյիւտ աղաճը) 30 հար. մեդր տրամագծով չրջանակներ կը շինեն. այս չրջանակները ըստ հաճոյս կը կամ տանձաճեւ կընեն՝ տղայոց թուցիկներուն պէս, և մէջ տեղէն կոթ մը կը հաստատեն, չրջանակէն դուրս 30 — 40 հար. մեդր երկայնութեամբ կոթին մէկ ծայրը ազատ կը մնայ, իսկ միւս ծայրը չրջանակին դիմացի եղերքը կը հաստատեն, որ տրամագծի մը պէս չրջանակը երկուքի կը բաժնի: Շրջանակին վրայ կը փակցնեն վիմացիկ թուղթ մը, կամ բարակ սրտատառ մը, և կամ խիստ փոքր ծակերով ցանց մը: Ասոնցմէ որն որ յարմար դատէք, փակցնելէն վերջը պէտք է վրան ձեփել վերայիշեալ ստուղէն:

Պզտիկ տղաքներ կամ աղջիկներ (օրական քիչ վճարելով՝ նուազ ծախք ընելու համար) այդ վարմերէն (տուգաք) մէյ մէկ հատ ձեւքերնին՝ կը վաղվատեն այգիին մէջ, մերթ ընդ մերթ թեթեւ ցիցումներ տալով որթատունկերուն, որպէս զի՝ թիթեանիկները անհանգիստ ըլլալով, տերեւներուն տակէն դուրս ելլեն: Տղաքները պէտք է հետապնդեն թիթեանիկները, և երբ մօտենան անոնց, իրենց վարմերով կը զարնեն, որ վարմին վրայ փակչելով կը բռնուին:

Կը գործածեն նաեւ միջատասողան դեղեր:

թրթռները սառնեցնելու համար սովորել են յարմարագոյնը հետեւեալն է :

3 քաշ արարիկ օճառ (դեղին կակուղ օճառ մը) դրէք կարասի կամ կիսատ տակառի մը մէջ, վրան լեցուցէք 10 քաշ տաք ջուր : չարունակ խառնեցէք, մինչեւ որ օճառը հալի ջուրին մէջ : յետոյ վրան աւելցուցէք 1 քաշ իգափողի փոշի (poudre de pyrèthre = բիրէ թօզու) : պզտիկ ցախաւելով մը (չալըսիւփիւրկէ) խառնեցէք, և այս ամառն վրայ աւելցուցէք ի վերջոյ 90 քաշ եւս ջուր :

Թէեւ ուրիշ միջատասպան գեղեր չառ կան, բայց այս պարագային՝ քանի որ խաղողի ողկոյզներու վրայ պիտի կատարուի գործադրութիւնը, ամենէն յարմարագոյնը մեր վերի բացատրածն է, որ ո ե է գէշ հոտ մը չի հաղորդէր խաղողին : Բայց որպէս զի չառ հեղուկ չի գործածուի սարապ տեղը, պէտք է ձարձատիչ գործիքով մը կատարել գործողութիւնը, որու մասին պէտք եղած բացատրութիւնները տուած ենք անցեալ տարի՝ միլիտուի վրայ գրած տետենիս : Եթէ չի կարողանաք այդպիսի գործիք մը ձեռք անցունել, այն ատեն ցախաւելով կը սրսկէք ձեր միջատասպան գեղը :

ՍԵՒԱՆԵՍ (black-root — ՍԱՆ)

Պատասխանենք այժմ ձեր երկրորդ հարցման : ձեր տուած բացատրութեան նայելով, «սան» կոչած հիւանդութիւննիդ անգլիէրէն Պլաք-րուդ ըսուած այգիներու հիւանդութիւնն է, որու մենք ալ «սեւանեխ» ա՛ռնը տուինք : Ահաւորիկ խկապէս սեւանեխի յատկութիւնները :

Սեւանեխը պարզապէս մանրէսնկային արդարութիւն մ'է, և ընդհանրապէս գարնան վերջերը գեղեցիկ օրերու մէջ երեւան կուգայ, առատ ցօղէ՝ կամ տեղատարափ անձրեւէ մը վերջը : Նախ որթատունկի տերեւները կը վարակուին, որ յայտնի կըլլայ ասոնց վրայ գոյացած՝ փոքրիկ ոսպերու խոշորութեամբ, և դէս ու դէն ցանցնուած շիկազոյն բիծերէն : Այս բիծերը շատ շուտով կը սեւանան, որ նշան է մանրեատունկին հասունանալուն : Այդ ատեն սունկին մանրեհատիկները, կամ որ նոյնն է սփիւռները

(spores) կ'անջատուին, և փոքր չարժուածք մը, կամ քամիի ազդեցութեամբ կը տարածուին ազոխներու (գօրուք) վրայ : Եթէ այդ միջոցին օդը դաղջ և տափուկ է (խոնաւում), այդ սփիւռները կը բաշխուին և ազոխի հատերուն մէջ կը մխրձկին իրենց սնկասերով (միսէլիում), ուր կը պտղաբերին, և ձեր ըսածին պէս, շատ անգամ ամբողջ ողկոյզները կը սեւանան ու կը չորնան : և այսպէս այգեկութի ծախքէն ու ձանձրոյթէն կ'ազատէ զձեզ :

Մանրեատունկը երբ խաղողի հատերուն մէջ մխրձկի, անհաւատալի արագութեամբ կ'աճի և կը պտղաբերի : Պտղաբերութիւնը կը կատարուի տեսակ մը մանրադիտային տիկերու (թուլում) նման պարկուճներով (գապճք), որոց մէջ պարփակուած են 8 հատ սփիւռներ : Պարկուճներն ալ պարփակուած կ'ըլլան տեսակ մը բեղմնարան կոչուած պարկիկներու մէջ : Իւրաքանչիւր բեղմնարան կը պարունակէ իր մէջ՝ մօտաւորապէս 80 ի չափ պարկուճներ, որով և՛ իւրաքանչիւրին մէջ կը գտնուի 600էն աւելի սփիւռներ : Արդ՝ վարակուած խաղողի հատիկ մը՝ մէկ քանի միլիոններ կը պարունակէ իր մէջ այդ բեղմնարաններէն : այնպէս որ, իւրաքանչիւր վարակուած խաղողի հատիկէն դուրս կը պոռթկան միլիառաւոր սփիւռներ, և ամբողջ շրջականեր աւեր ու քանդ կը սփռեն :

Ասիկա գիտնալով, կ'արժէ ուրեմն որ այգեպանները ոգի ի բռին աշխատին այդ սոսկալի հիւանդութեան առաջը առնելու համար : Գիտութիւնը մէկ միջոց միայն ցոյց կուտայ մեզ, որ կարի ազդեցիկ է, և միլիտուի դարմանումին համար յանձնարարուած պղնձային բաղադրութիւններն են :

Դարմանումը երբ իբրեւ կանխազգուշական միջոց գործածուի, այսինքն հիւանդութիւնը երեւան գալէն առաջ, պղնձի ծծմբատը կարգիլէ սեւանեխի սփիւռները բողբոջելու : հետեւաբար և վարակման առջեւը առած կ'ըլլաք : Այս առթիւ ինչ որ գրած ենք անցեալ տարի միլիտուի դարմանումին վրայ, նոյնը և գործադրելի է սեւանեխի համար : Դեղի ձարձատումը պէտք է գէթ երեք անգամ կրկնել ամբողջ մինչեւ ցվերջ այգեկութի :

Ղ. ԲՈՒԼԱՏ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԲՐԻՆՁԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

— օ —

Բրինձի մշակութիւնը մեր թուականէն մուտ դատած ըլլալը այս կողմեր՝ ճշգրտապէս յայտնի չէ. այլ կը կարծուի թէ՝ Հռովմայեցւոյ տիրապետութեան ժամանակէն հաստատուած է, որն որ կը շարունակէ ց'արդ, առանց մշակման եղանակին մէջ ու ե գիտական նոր մէթոտ մ'ընդունելու:

Բրինձի արտերը արուեստական կերպով փոքրիկ լիճերու վերածուած են, և ամբողջ արեւու տաքութեան ազդեցութեան տակ՝ խիստ գարշտհոտութիւն մը կ'արտաբերեն. այնպէս որ, խեղճ մշակողներ, կարծես թէ վարժուեր են կամ իրենց պարտք սեպեր են մեծաւ մասամբ ամուռն ժանտաւանդէ՝ ջերմէ տառապելու:

Ապրիլ ամսոյ 20 էն մինչ 24, թէ՛ ջուր կը կապեն և թէ՛ «ազտարտ» կ'ընեն. այսինքն լճակին մէջի հողը տակնուվրայ կ'ընեն, որով՝ նախորդ տարւոյ հունձէն մնացած արմատները տակը կը մնան, և տակի երեսն ալ վրան գալով՝ տակը մնացած արմատները և կարգ մանպէտ խոտեր ինքնին փոխելով՝ աղբի կը վերածուին. որով ներկայ մշակութեան անհամեմատապէս կ'օգնեն. իսկ ջուրն ալ կ'առնուն իրենց մասնաւոր առուակներէն, որ իրենք շինած են՝ մեծ գետերէ ճիւղեր բանալով:

Այս երկար գործողութիւնը երբ լրանայ, կ'սկսին սերմանել. և սակայն, թէ հողը յեղաշրջելը, թէ ջուր կապելը և թէ՛ սերմանելը շատ անգամներ կը տեւէ մինչեւ մայիս 15. որովհետեւ, լճակներ կան որ ուրիշ լճակներու պէս ուղղակի արեւու տաքութեան ազդեցութեան տակ չ'գտնուելով՝ ուշ կը տաքնան, որով և այս գործողութիւնները ուշ կը մնան: Իսկ խոտը՝ կը քաղեն յունիս 15ն մինչ 15. յայտնի է թէ բրինձին հետ վայրի խոտեր ալ կը բուսնին հաւասարապէս և ասոնք՝ որպէս զի իրենց դրացի բրինձը չ'սեղգեն, մշակը կ'տախտուի, նշունակեալ ժամանակին՝ լճակին մէջ մտնալով մի առ մի արմատախիլ ընել: Եւ այս հողագործութեան մէջ բրինձի մշակութեան պէս, համանաւանդ անոր խոտը քաղելու գործողութեան պէս

տաքանելի աշխատութիւն մը չ'եմ տեսած. այնպէս որ, խոտը՝ իւրաքանչիւրը հատիկ հատիկ իր արմատէն քաղել հստակ համար, խեղճ մշակը պարտաւորուած է ծունկ չորքել, և մինչ կուրծքը ջուրին ու տղմին մէջ մտնած աշխատել՝ իր ընտանեաց բոլոր անդամներով. այս բան մը չ'է ըսենք, հապա այն աներես պզտիկ օձերը, որոնք ջուրին մէջ՝ թէեւ չ'են վնասեր՝ (խնդիր է գիտնալ թէ ինչո՞ւ չ'են վնասեր*) լայց շիացած տղոց պէս բոլորով-

* Ն. Խ. — Օձերը երկու ցեղի կը բաժնուին. թուսաւոր և անթոյն:

Թուսաւոր օձերը իրենց կլափին (վերի ծնօտը) վրայ երկու երկայն, սրածայր, կոր և անամէջ ժանիքներ ունին. որոնց արմատին վրայ մէյմէկ թաղանթեայ պարկեր կան. թոյնը կը պատրաստուի այդ պարկերուն մէջ. Թուսաւոր օձերը երբ մէկը խածնեն, իրենց ժանիքներու մարմնոյն մէջ մտնելէն՝ պարկերը կը ճնշուին և թոյնը կը հոսի բացուած ծակերուն մէջ:

Օձերու թոյնը դեղնադոյն և թափանցիկ հեղուկ մէ, անհոտ և անհամ. Եթէ մարսողութեան խողովակին վրայ ու ե վէրք կամ ճեղքաւոր չիկայ, առանց վտանգաւոր հետեւանքի մարդ կրնայ խմել օձերու թոյնը. որովհետեւ անմարսելի է իր այդ վիճակին մէջ. Բայց երբ արեան հետ ուղղակի հաղորդակցի, այն ատեն իր ազդեցութիւնը անմիջական կ'ըլլայ, և խիստ շատ անգամներ ալ վարկենական մահը իր հետեւանքը:

Անթոյն օձերը ոչ այդ սրածայր ժանիքները ունին և ոչ ալ թուսակի պարկերը. ասոնք այս պատճառաւ է որ, ասոնք անվնաս կը նկատուին, և մինչեւ իսկ երկրագործութեան համար ալ օգտակար. որովհետեւ իրենց անուղղը կը կազմեն մեծ մասամբ երկրագործութեան փութակար ճճիներ, միջաններ, որբեր, և երբեմն ալ մուկեր, գորտեր և մողէզներ:

Անթոյն օձերու ցեղատիպն է Լուսուր (couleuvre) որ վերի վերայ երկու կանգունի չափ (1 մէդր 30) երկայնութիւն կունենայ:

Լորտուներու կռակի գոյնը ընդհանրապէս կանաչ, երբեմն ալ մութ կապոյտ կ'ըլլայ, և մանր թեփերով ծածկուած. իսկ փորերին ճերմակ և սեւ գոյնով խոշոր թեփերով ծածկուած: Կը գտնուին նաեւ ուրիշ լորտուներ ալ որոնք գոյնով թէ երկայնութեամբ կը տարբերին:

Ասոնք օգոստոս ամսու մէջ 30 ի չափ ճերմակ և բարակ կեղեւով հաւկիթներ կածեն աղբերու մէջ կամ կակուղ հողերու տակ: Հաւկիթները կը նմանին շերամի խոշոր խողպաներու, որ թաղանթակերպ երկրով մը իրար միացած կ'ըլլան:

Այս օձերը երկակեցացի են. այսինքն՝ թէ ցամաքը և թէ ջուրերու մէջ կ'ապրին: Գլխաւորաբար երբ տակաւին փոքր են, ջուրերը շատ կը յաճախեն: Ձեր սրիդի լճարտերու մէջ գտնուածներն ալ լորտուի ցեղին վերաբերող մէկ տեսակին ձագերը ըլլալու են, ուրկէ կրնաք հասկնալ թէ՛ ի՞նչու չեն խածներ:

քըզ՝ «գաղտնի», կը վարձենեն՝ առանց սակայն տպուկներու չափ համարձակ ըլլալու, որոնք արդէն իրենց անզը բռնած են թեւերուդ և ոտքերուդ վրայ. և սակայն ստիպուած են՝ քաջած խոտիդ պէս անոնք ալ մէկիկ մէկիկ փրցնել նետելու:

Խոտ-քաղը երբ լրանայ, մշակին գործն ալ լննցած ըլլալով՝ ամառանոցներ կը քաշուին. բայց գարձեալ իւրաքանչիւր գիւղ իր պահապանը կը ձգէ՝ լճակներու ջուրերուն հսկելու. այսինքն ջուրը լճէն անսպասելի ընկու՝ մինչև սեպ. 1, ուրիշ վերջը ջուրը նուազի ալ հոգ չ'է, քանի որ հունձքն հասուննալու՝ եփելու կը կարօտի արեւուն տակ:

Հունձքաղը հսկ. 1 էն սկսելով, կը տեւէ մինչև հոկտ. 20. բայց ընդհանրապէս 15 ին լննցած կ'ըլլայ: Ասոնք՝ բրինձը կը քաղեն փոքրիկ ձեւաց մանգաղներով, և առանց որայ կապելու, կը բերեն և շուրջանակի կը դիզեն կալի տեղը՝ գրեթէ 1 մետր բարձրութեամբ միայն. և երկու օր քիչ մ'եւ չորնալով՝ կ'սկսին կալի գործողութեան (արդէն հունձքը գրեթէ չոր դուրս կուգայ լճակէն, որուն ջուրը հնձելու միջոցներուն ցամքած ըլլալով՝ արեւուն տակ միշտ կը չորնայ): Ասանց կալը, ցորենի կալին կը նմանի, բայց հատիկները առնելու կերպը կամ գործիքը նոյնը չ'են. բրինձի կեղեւոտ հատիկները* (որոնց գիւղացիք «չեթիւկ», կ'ըսեն) առնելու կամ ծեծելու համար, երկու երկար գաւազաններ կաշիի կտորով մը կը միացնեն, և կը ծեծեն անխնայ կերպով՝ 4—6 մարդ իրարու քով կանգնած՝ հաւասար շարժմամբ. այսպէս հատիկները ժողուելով կը տանին իրենց «սէրանտէրները» (սրենբուս վրայ մթերանոցներ) ուր հոգին միջոցաւ լաւ մը չորնալէ յետոյ, ըստ կամս երբ ուզեն բրինձ առնել, «իլիկ» անուանով գործիքին մէջ կը լեցնեն և կ'սկսին ծեծել, որով հատիկներու վրայի կեղեւները բաժնուելով, զուտ բրինձը կը մնայ: Բայց այս գործիքով, շատ բրինձ կը կորսուի, որովհետեւ ծեծուած ատենը միշտ կը կոտորեն և մաս մ'ալ ալիւր ըլլալով՝ կը ցուրի: «Իլիկը» նոյն հատկութեն մնացած կամ հնարուած գործիք մ'ըլլալու է, այնչափ տարօրինակ և

կաշտ է, ամբողջ կազմուածը հաստ փայտ մ'է՝ ծայրը խոռոչաւոր երկաթով մը, որպէս զի բրինձը շատ չ'կտորաի: Ամբողջ 12 ժամուայ մէջ, երկու հոգի միասին աշխատելով, հալել 15—18 լիտր բրինձ կրնան ձեռք բերել մէկ իլիկով. իսկ մէկ հոգի առանձինն չի կրնար գործել՝ այնպէս իմն շինուած է «իլիկը»:

Միջին հաշուով, և միշտ 10 հոխայ սերմը 300 օխայ բրինձ կարապդրէ. վերել նշանակեալ այնչափ ծանր աշխատութեանց փոխարէն ալ, այս քանակութիւնը ըստ իս շատ չ'է:

Իմ փափաքս է գիտնալ թէ՛ կա՞յ կատարեւապարծեալ գործիք՝ մ'որով բրինձին կալը հեշտ ըլլայ, այսինքն կեղեւը շուտ ելլայ վրայէն և առանց կոտորելու ճերմակ ըլլայ եւրոպականներուն պէս. եթէ կը գտնուին կամ կան այդ կարգի գործիքներ, ինչ արժէքով են և ո՞ր երկրի մէջ կը գտնուին, կամ ի՞նչ միջոցաւ կը բերուին:

Թիբեթցու

Գ.

Մ. Խ. Պատասխանը յաջորդ թուով

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Շարուն. թիւ 55 էն)

Խանձու մի գործողութիւնը կը կատարեն այժմ աւելի կատարեւապարծեալ մեքենաներով, և կրտիկ տեղ կը գործածեն լուսաստրութեան կալը՝ որ մանաւանդ բարակ պտտառներու և շղարչներու համար խիստ գահացուցիչ արդիւնք յառաջ կը բերէ:

Կազով խանձելու մեքենան կը բաղկանայ գլխաւորապէս մէկ երկու կապի բարակ խողովակներէ, հաստառուած հորիզոնական դիրքով, որոնց երկայնութիւնը՝ և երեսը, մէկ գծի վրայ խիստ փոքր ծակեր ծակուած են: Կազը այդ խողովակներուն մէջ կը մտնայ օդի հետ խառնուած, որով

* Մ. Խ. — Ըստ մեզ՝ որիդ.

և Թախտիկներէն դուրս ելած բոցերը կապ-
տագոյն կ'ըլլան:

Մասնաւոր ըծակով մը կազի խողովակ-
ները վեր կամ վար կը շարժին, բոցերու
հեռաւորութիւնը ճշդելու համար: Ոմանք
փոխանակ խողովակները ծակծակելու, անոնց
երկայնութեանը խիստ բարակ ճեղք մը կը
բանան, ուրկէ միապալտող բոց մը կը ժայթ-
քի դնեն:

Այս նախապատրաստական գործողու-
թիւններէն վերջ, պատտառները կ'ենթարկեն
սպիտակացուցման գործողութեան:

Ինչպէս գիտենք, այս գործողութիւն-
ներով պատտառներու վրայ գտնուած բնա-
կան կամ պատահական օղտեղութիւնները
կը ժաքեն: Այս օղտեղութիւնները կազմող
նիւթերը հետեւեալներն են:

Սոսինձ (թութկալ), օսլայ (նիշաթայ), սպի-
տափնէց (հաւկիթի ճերմկուց), չաքար, որ պոս-
տառները ստայնելու տաթիւ կը դործած-
ուին:

Փռչի, ցեխ. — ճարպեղէն նիւթեր. — թե-
լերուն մէջ գտնուած բնական գունատու
գոյանուտները. — ռետնային գոյանուտներ:

Բոլոր այս նիւթերը տարբեր բնուորու-
թիւն և յատկութիւն ունենալուն, սպիտա-
կացուցման գործողութեան մէջ տարբեր
միջոցներ կը պահանջեն պատտառներուն
վրայէն անհետանալու համար:

Առաջին գործողութիւնը որ կը կոչուի
սլարգապէս «լուացք» կամ «սոսնձատուում»,
պատտառներու վրայի մածուցիկ նիւթերը
(սոսինձ, օսլայ, և ըն.) փռչները, ցեխը և ըն.
մաքրելու կը ծառայէ. և միեւոյն անգամ
այ թրջելով, հետագայ գործողութեանց
սլտորատում կ'ըլլան:

Պատտառներուն ծալքը քրքրելով կը դնեն
ջրով լեցուն կաթնայի մը մէջ, ժամու մը
չափ եռացնելէ վերջը կը հանեն և պաղ ջու-
րի մէջ կը ցայեն:

Լուացքը Եւրոպայի մէջ կը կատարեն մաս-
նաւոր կերպով շինուած կաթնաներու մէջ:
Այս կաթնաները երկաթէ խնջող սնտուկներ
են երկուքի բաժնուած: Եւրաքանչլար բա-
ժանումին մէջ վերէն վար գլաններ հառ-
տառուած են, որոնց մէջէն կ'անցնի պատ-
տառը՝ լուացուելու համար: Գլանները միեւ-
նոյն ուղղութեան վրայ հաստատուած չեն,

այնպէս որ՝ սրտատուը անոնց վրայէն անցած
տառն, վերէն վար օձապտոյտ ընթացք մը
կ'ունենայ: Կաթնային առաջին բաժանումին
մէջ ջուրը կը տաքցնեն շոգիով, որու մէջ
պատտառը լուացուելով կ'անցնի երկրորդ բա-
ժանումին մէջ, ուր ջուրը պաղ ըլլալով, ցա-
յելու կը ծառայէ:

Ոմանք լուացքը փութացնելու նպատա-
կաւ, տաք ջուր պտրուեցող բաժանումին
մէջ բողբոջած գարի կը դնեն: Յայտնի լը-
րանալէն վերջ կարգ մը գլաններու տակէ
կ'անցնի պատտառը, որով իր վրայ գտնուած
աւելորդ ջուրը կը քամուի:

Երկրորդ գործողութիւնը ճարպատուումն է:
Սպիտակացուցման մէջ կատարելապէս յաջո-
ղութիւն գտնելու, և քրքրի օղտեղութիւնը
անմիջական ընելու համար, այս գործողու-
թիւնը ամենակարեւոր տեղ մը կը բռնէ:
ճարպատուելու գործողութիւնը՝ ինչպէս յայտ-
նի է իր անունէն, նպատակ ունի, պատտա-
ռին վրայ գտնուած ճարպային նիւթերը
մաքրելու, և այս կերպով թելերը ուղղակի
քրքրի օղտեղութեան ենթարկել:

Պատտառներու վրայէն ճարպային գոյա-
նուտները զատելու ամենէն աւելի յարմա-
րութիւն ունեցող նիւթերը՝ ալքալիներն են,
որոնք՝ այդ գոյանուտներուն հետ միանալով
կ'օձառանան:

Շար.

Ղ. ԲՈՒԱՏ

ԹԵՐԹՕՆ «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»

(8)

ՓԻԽԼ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Արդ՝ հաշուեցի որ նախաճաշն ալ նա-
խընթաց գիշերուան ընթրիքին պէս գտնց
պիտի առնուի: Ասով հանգերձ որոշեցի
գիւցազնասիրտ ըլլալ անօթութեան հարկին

առջին: Մարթա լրջօրէն հաւատալով կը տըր-
բէր: Դժբաղդարար անկարելի էր դուրս
ելլել և ատիկա էր որ մտազբաղ կ'ընէր
զիս: Անշուշտ կ'ըմբռնէր թէ ինչու չէի
կրնար տունէն հեռանալ:

Մօրեղբայրս կ'աշխատէր միշտ. իր երե-
ւակայութիւնը զուգադրութիւններու խոհա-
կան աշխարհին մէջ կորսուած՝ կարծես երկրէն
հեռու, երկրային պէտքերէն դուրս կ'ապրէր:

Կէս օրուան ատենները անօթութիւնը
լրջօրէն սկսաւ նեղել զիս: Նախընթաց օրը՝
Մարթա ուտեստարանին պաշարը լստած էր
միամտօրէն՝ ա'լ տունը ուտելիք չկար: Սակայն
ես հաստատ կը մնայի որոշումս վրայ: Տեսակ
մը պատուի խնդիր կը համարէի ատիկա:

Ժամը երկու հնչեց. ծաղրելի ու նոյնիսկ
անտանելի կը դառնար վիճակս. աչքերս խո-
շոր խոշոր բացած՝ մտովի կ'ըսէի թէ. պար-
զապէս վաւերագրին չափազանց կարեւորու-
թիւն կ'ընծայէի, թէ մօրեղբայրս հաւատ
չպիտի ընծայէր անոր, պարզ խաղ մը նկա-
տելով զայն. շատ շատ իր կամքին հակառակ,
թոյլ չպիտի տային այդ ուղեւորութիւնը
կատարելու, եթէ երբեք փորձել ուզէր: Բայց
վերջապէս կրնար ծածկագրին բանալին գտա-
նել, իմ ծոմապահութիւնս չափ պիտի մնար
ինծի:

Այս պատճառաբանութիւնները, զոր նա-
խընթաց օրը զայրայթով մէկգի պիտի նե-
տէի, հիմա հիանալի թուեցան. մինչեւ այդ
ատեն սպասեւ անգամ անհեթեթ գտայ,
ու որոշեցի ամէն բան յայտնել:

Ուտտի կը ջանայի խնդիրը կերպով մը
հասկնելու, երբ բրօֆէսէօրը ոտքի ելաւ ու
զլիարիւր դնելով պատրաստուեցաւ մեկնե-
լու:

Ինչ, ա՛ տունը ձգել երթալ ու վերստին
մեկ հոս փախել: Երբեք:

«Մօրեղբայր, ըսի»:

Ձայն:

«Մօրեղբայր չիտէնպօք, կրկնեցի բար-
ձրացնելով ձայնս:

— Հէ՛, ըրաւ, մէկէն ի մէկ արթնցած
մարդու մը պէս:

— Է՛հ ուրեմն, ու՞ բանալին:

— Ի՞նչ բանալի: Դուո՞ն բանալին:

— Բայց, ո՛չ գոչեցի, վաւերագրին բա-
նալին»:

Բրօֆէսէօրը ակնոցին վրայէն ինծի նա-
յեցաւ. անտարակոյս անսովոր բան մը նշմա-
րած էր դէմքիս վրայ. որովհետեւ ուժ-
գնակի բռնելով բազուկս ու անկարող՝ խօսե-
լու, նայուածքով հարցաքննեց զիս:

Այդքան հակիրճ բանաձեւուած հարցում,
չեմ յիշեր երբեք կեանքիս մէջ:

Հաստատական շարժում մը ըրի:

Իր աչքերը հրացայտ շողեր արձակեցին
ու ձեռքը սպառնական դիրք մը առաւ:

Այս պարագաներուն մէջ տեղի ունեցած
համր խոստովանութեան մը՝ ամենէն ան-
տարբեր հանդիսատեսն իսկ պիտի չահագը-
գուէր, այնպէս որ ա'լ չէի համարձակէր
խօսիլ, փախնալով որ մօրեղբայրս իր բեր-
կութեան առաջին գրկախառնութիւննե-
րուն մէջ մի՛ գուցէ խեղդէ զիս: Այնքան
ստիպեց որ՝ ա'լ հարկ եղաւ պատասխանել:

«Այո՛, այդ բանալին... դիպածը...»

— Ի՞նչ կըսես, գոչեց աննկարագրելի
յուզումով մը:

— Ահաւասիկ, կարգացէ՛ք ըսի, իրեն
ներկայացնելով այն թուղթը, որուն վրայ
գրած էի քիչ մը առաջ:

— Բայց ատիկա նշանակութիւն չունի,
ըսաւ թուղթը ճարձկելով:

— Այո՛, սկիզբէն կարդացուելով, բայց
եթէ վերջէն կարդաք...»

Տակաւին խօսքս չլրացուցած՝ բրօֆէսէօրը
ճիշդ մը արձակեց, ճիշդ աւելի բան մը, ճշ-
մարտ մտնչիւն մը: Լոյս մը կը ծագէր մո-
քին մէջ, կերպարանափոխ եղած էր:

«Ա՛հ խորամանկ Սաքնիւսէմ, գոչեց,
ըսելէ պարբերութիւնը նախ հակառակ կող-
մէն գրեր ես»:

Ու թուղթին վրայ յարձակելով, աչքերը
սղտորած, ձայնը յուզումնալից, կարգաց
ամբողջ վաւերագիրը՝ վերջին գրէն մինչեւ
առաջին գիրը բարձրանալով:

In Sneffels Ioculis craterem kem delibat
umbra Scartaris Julü intra calendas des-
cende, audas viator, et terrestre centrum at-
tinges. Kod feci. Arne Saknussem.

Այս յուսի լատիներէնին թարգմանու-
թիւնն է՝ «Իջի՛ր Եօքսիւլի խառնարանին մէջ, զոր
Սքարթարիսի ստուերը յուսիս ամառնալին
կուգայ գգուել, և ո՛վ յանդուգն ուղեւոր
պիտի հասնիս Երկրիս կեդրոնը: Ինչ որ ես
ըրի, Առն Սաքնիւսէմ»:

Մօրեղբայրս այս ընթերցման վրայ վեր-
ցատքեց, կարծես թէ Լէյտի ելեքտրական
շիշի մը դպած էր ակամայ:

Իր յանդգնութիւնը, բերկրութիւնն ու
համոզումը փառաւոր կերպարանք մը կու-
տային անոր. կ'երթար կուգար, գլուխը
երկու ձեռքերուն մէջ կ'առնէր, աթոռները
տեղէն կը շարժէր, գրքերը իրարու վրայ կը
դիզէր, և ինչ որ անհաւատալի էր, իր հո-
ղաքարերուն հետ կը խաղար, բռնեցք մը
հոս կը զարնէր, ձեռքի հայուած մը անդին
կուտար: Վերջապէս ջիւերը սկսան հան-
դարալի, ու շատ հոտանիւթ սպառած մար-
դու մը պէս՝ թիկնաթոռին մէջ փռուեցաւ:

« Բանի մը վայրկեանի լռութենէ յետոյ,
ժամը քանի՞ է հարցուց:

— Երեքն է, պատտօնաւորացի:

— Դե՛հ, ճաշի ժամը ո՞րքան արագ սա-
հեր է: Անօթի կը մեռնիմ: Օ՛ն սեղան եր-
թա՛նք: Յետոյ ընդհուպ... »

— Ընդհուպ:

— Ուղեւորութեան պայուսակս պիտի
պատրաստես:

— Հէ՛, գոչեցի:

— « Բուկդ ու մէկտեղ » պատտօնաւորացի,
անողոք բրօքէսէօրը՝ ճաշարահ մտնելով:

Այս խօսքերուն վրայ սառսուռ մը սա-
հեցաւ ամբողջ մարմնիս վրայէն: Սակայն
իմքլինքս բռնեցի: Որոշեցի իսկ զուարթե-
րես երեւիլ: Գիտական փաստեր միայն պի-
տի կրնային մօրեղբայրս կասեցնել. արդ՝
չատ լաւ փաստեր կային նմանօրինակ ուղե-
ւորութեան մը կարելիութեան դէմ: Երկ-
րիս խորը երթալ, ի՞նչ յիմարութիւն: Ու իմ
տրամաբանութիւնս պատենհ առթին պահելով,
ճաշով զրազեցայ:

Աւելորդ է հոս առաջ բերել մօրեղբորս
զայրուցքը, երբ ռեզանը անպատրաստ գը-
տաւ: Ամէն բան լուսարանուցաւ: Մար-
թա թոյլատրուեցաւ դուրս ելլելու: Խեղճ
նստահանին շուկայ վազեց, ու ժամ մը յետոյ
անօթութիւնս յագեցուցած՝ կացութեան
վրայ կը մոմտայի:

Ճաշի ատեն մօրեղբայրս զուարթ էր
գրեթէ. գիտունի անմեղ կատակներ կ'ընէր:
Աղանդերէն յետոյ՝ նշան ըրաւ ինծի,
միասին աշխատութեան սենեակը երթալու:
Հնազանդեցայ: Մօրեղբայրս իր ուշխա-

տութեան գրասեղանին մէկ ծայրը նստաւ
իսկ ես միւս ծայրը:

« Աքէ՛լ, ըսաւ քաղցր ձայնով մը, դուն
չառ հանճարեղ տղայ մըն ես. շա՛տ փա-
ռաւոր ծառայութիւն մը մոտուցիր ինծի,
երբ ես այդ պայքարէն պարտաւած՝ պիտի
թողէի առաջին կարծիքս: Ո՛րքան պիտի
մոլորէի հիմա: Ո՛վ գիտէ: Տղա՛ս, երբեք
չպիտի մոռնամ ըրածդ, իմ ապագայ փառ-
քիս դուն ալ մասնակից պիտի ըլլաս:

« Օ՛հ, ըսի ինքնիրենս, բարկութեան վայր-
կեանը անցած է. ճիշդ ատենն է այդ փառ-
քին վրայ վիճելու:

— Ամէն բանէ առաջ, յարեց մօրեղբայրս,
սովեմաբացարձակ լռութիւն մը պահելու ես
այս գաղտնիքին վրայ. կ'ըմբռնե՛ս: Գիտուն-
ներու աշխարհին մէջ շատ նախանձողներ
ունիմ, որոնք պիտի ուզէին այս ուղեւորու-
թիւնը կատարել. բայց մեր վերադարձէն
յետոյ միայն կ'սկսած պիտի արթննայ իրենց
մտքին մէջ:

— Կը կարծե՞ք թէ, ըսի, այդպիսի ին-
զալս մարդոց թիւը մեծ ըլլայ:

— Անտարակոյս. ո՞վ չուզէր ատոնկ համ-
բաւ մը ձեռք ձգել. եթէ այդ վաւերագիրը
ծանօթ ըլլար, երկրաբաններու ամբողջ բա-
նակ մը պիտի խռժէր Առն Սաքնիւսէմի
հետքերուն վրայ:

— Բան մը որուն համոզուած չեմ մօ-
րեղբա՛յր, վաւերագրին ստուգութիւնն է,
զոր ոչ մէկ բան կը հաստատէ:

— Ի՛նչպէս, հապա՛ այն գիրքը, որուն
մէջ գտանք զանի:

— Շա՛տ լաւ, ես ալ համամիտ եմ որ
Սաքնիւսէմ գրած ըլլայ այս տողերը, բայց
ստիկէ չի հետեւիր թէ իրապէս կատարած է
այդ ուղեւորութիւնը. միւսէ խորհրդաւոր
գաղտնիք մը չի՞ պարունակէր այս հին մա-
գալաթը »:

Այդ վերջին գաղտնիք բառը լսելուս զըզ-
ջացի. բրօքէսէօրը յօնքը պիտտեց. վախոյ
որ խօսակցութեան շարունակութիւնը ան-
կարելի դառնայ, բարեբաղդաբար այդպէս
չեղաւ: Բռնն խօսակցիս շրթունքներուն
վրայ ժպտի պէս բան մը նկարուեցաւ ու
պատասխանեց.

Շ-բ.

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳԱԶ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԴԻՏՈՒԹԵԱՆՅ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. 2. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառագրքը, կը, Խօսի աշխարհիկ լեզուով եւ գործնական ոճով բժշկութեան, Վերաբուժութեան Ստորաբաժանութեան, ճարտարարուեստից, Բնաբանութեան, Փիմիայի, Դեղերու, Բնական պատմութեանց, Աստղաշխութեան, Երկրագործութեան եւ այլ գիտութեանց վրայ:

Ըստ կարելոյն ամենայն խնամք տարուած է բառերու ճշգրտութեան: Ընդարձակ բացատրութիւններ փութայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց տեւալ ամենէն անգործածական նիւթերն: Իսկ կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք տնայական են: Այս աշխատութիւնը որպէս զի, ինքեան կատարեալ լլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է ստ մը հանրագիտական եւրոպական բառարաններ:

Գիտական բառերու մասին առաջնակարգ թիւերնք եղած է այս գործիս Վ. Հ. Բաղդուղ Հանգստի ընդարձակ ընտիր բառագրքին, իսկ բունոց մասին Վ. Հ. Ալիշանի Հայ-բառարան: Աւելորդ չէ համարուած գիմելը նաեւ մասնաճիւղերու վրայ խօսող գրքերու օգնութեամբ:

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ բաղդով ամենէն գործնական եւ օգտակար գիտութիւններն զանոնք խմբադրած է մի հատորի մէջ՝ զարդարելով ամէն ճիւղի վերաբերեալ զեղեցիկ պատկերներով:

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութածայ թերթերու մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հաւրերորդամբեր, լայնք 16 հրմ. գրերն մանր եւ դիւրընթեանի:

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սանթիմ, ամբողջ գիրքն 10 Փրոնթ (—4 ռուբլի, 2 տուար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ պէտք է փափաքողն յղէ առ Տեսչութիւն Վեկտրիկի Միութարեան Տպագրատան, ապահովագրեալ նամակաւ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը:

Թերթերն կը շրջանաւորեն հինգ հինգ շաբաթանի ընթացքով: Բաժանորդներն եւ հաճկաստանի համար յայտնի է թէ լաւագոյն է յանձնարարականաւ (recom mandé) յղել. առ այս փափաքողն պէտք է 25 սանդիմ աւելի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ աւելցընէ Փր. 2,50—(12,50 Փր.—5 ռբլ.—4 ռուբլ տուար, վասն զի կորստեան պատասխանատու չէ Տեսչութիւնը):

Տպագրութիւնը աւարտելէ վերջ բառագրքին գինը պիտի բարձրանայ 15 Փրոնթի. բաց ի թղթատարի ծախուց*:

* Վերագրեալ սղդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր Գործակալներու եւ Բաժանորդներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, եւ կը յանձնարարենք Վեր. Հ. Ս. Երամանի սոյն հմայլի եւ արգիւնաշատ գործը, որ ոչ միայն Փրոնթագէտ հայերու, այլ մինչեւ իսկ ֆռանսերէն չգիտողը ամէն Հայ գրագէտի, բանասերի եւ ընթերցողի համար կարեւոր է, եւ անոնց չափ եւ աւելի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութեան քան որ ամէն բառի աւջեւ պիտի գտնան ընդարձակ բացատրութիւններ, լրատարանուած խնամտեղ պատկերներով:

Մ. Խ.

Լ. ԱՐՄԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԻ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԻՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիներ. Անգղիական եւ Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ, գինիներ եւ հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար դներով: Լ. Արսլանեան եւ Ս. Էմիրզէ Բնկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք եւ աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացընելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք դաւառաց համար, որոնց կը շրջան դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ եւ մաշելի դներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ճՇՄԱՐԻՏ եւ ԱՆԻՍԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գրտնւրիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան եւ Ս. Էմիրզէ Տեարց Դեղօրէից վաճառատունը, Փրնտգեան Խանի աակ թիւ 33-ուր. պիտի գտնեն ուղղակի Խորվէկիայէն բերել տրուած ամենաընտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ վերաբանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիներով:

ՇԵՐԱՄԻ ՍՄԵՆԱԸՆՏԻՐ ՀՈՒՆՏ

Որոնք որ կ'ուզեն շերտի ամենէն ընտիր հաւնաբըր ունենալ, պէտք են դիմել Պրուսայի «Իրէք Խան» կաշուած մետաքսի վաճառատեղոյն՝ հնտովաճառ Գրիգոր Փամպուլքեանի, որ բառթէօրեան գրութեամբ շերտի ամենաընտիր հաւնաբ կը պատրաստէ եւ կը մատակարարէ իրեն գիմնդներուն, խիստ շահացիչ գիներով:



**Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆ
ԹԵՅԻ ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ**

Ձինական, Հնդկական և Ճարտնական
ամենաընտիր տեսակէ եղող արտադրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշդիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ճէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն դը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են. ուստի
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-
ճառանիշին տակ Կ. Եսվրուեան և Յ.
Իսադուլեան սատրագրութիւնը փնտռե-
ցէք:

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ

(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՐ

Դիմեցէք առանց երկմտելու, Գուս-
թափու Ջարիֆեան դեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Ջարիֆ-
եան էֆ.ի հնարած «Հակակոչտային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:

Գաւառներէ ուղղութեամբ կը ղրկուի
թղթատարով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ-29րդ Տարի, Կիսամեամբ թիւ.
ազգային, Գրական և Քաղաքական լիամբարի. Տնօրէն
Մ. Մամուրեան: - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 ֆր-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԷՊ— 57րդ տարի, ամաթերթ, Հայ մասն
նագրական, ստուգարանական, պատմական, քերական-
ական, աշխարհագրական, հնախօսական, և ընդ - Տա-
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Itali)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵՐԵԱՅ — 13րդ տարի. ամաթերթ.
Հայ-գրական յօդուածներէն զատ ճշդիւ տեղեկութիւն-
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւ ընդ.
նկատմամբ, ամէն ամիս չոր հրատարակութեանց վը-
րայ եւ եւ ընդ-Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII/2 Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՅ ՇԱԲԱՐԱՎԱՃԱՌԱՆ

Եթէ կ'ուզէք պոստուական, համով
հոտով և տժան «լոգուժէքէրի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Ալեմեան,
Էսկի-Ջապթիյէ, թիւ 57, ճիշդ թուր-
քիա Օթէլի անկիւնը:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի-
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՒԱՏ,
որու դիմել պէտք է, առանց բացառութեան,
թերթիս վերաբերեալ ամէն գործառնու-
թեանց համար:

در علیہ دہ بعجہ قوسندہ اسک ضطہ دہ

۱۹. نومرو لی دکاندہ «مجموعہ»

سر محرری (بولاد)

Ղ. Բոուատ Տնօրէն-Խմբագրապետ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

19. Էսկի-Ջապթիյէ, Պաղլէ-Գափու-
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stemboul